

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՎԱՐԻՉ
ԱՐԺ. Տ. ԱԻԵՏԻՍ ՔՅՆՅ. ԱԲՈՎԵԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԵՐԵՔ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Առաջնորդարանի Երիտասարդաց Վարիչ՝ Արժ. Տ. Ալետիս Քհնյ. Արովեան, Հայց. Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան Կեդրոնական Խորհուրդի Ատենապետ՝ Անի Խաչատուրեան, Փոխ Ատենապետ՝ Ռաֆֆի Փոսթալճեան եւ անդամ Վիգէն Գալէնքեարեան, Շաբաթ, Յունուար 16ին Ֆրէզնոյի Սուրբ Պօղոս Հայց. Եկեղեցւոյ մէջ հանդիպում ունեցան Սուրբ Պօղոս Եկեղեցւոյ, Ֆաուլըրի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ եւ Եդեմի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ Երիտասարդաց Կազմակերպութեան հետ:

Անի Խաչատուրեան անոնց ներկայացուց Կեդրոնական Խորհուրդի 2010 թուի գլխաւոր ծրագիրները: Ապա Արժ. Տ. Ալետիս Քհնյ. Արովեան խօսեցաւ Թեմի տարբեր եկեղեցիներ իր կատարած այցելութիւններու եւ Երիտասարդաց կազմակերպութեանց գործունէութիւններու մասին: